վճարվել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, հայցվորի կողմից ներկայացվել է դատական ծախսերին անդրադառնալու միջնորդություն, իսկ հայցը ենթակա է բավարարման, դատարանը գտնում է, որ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ից հօգուտ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ-ի պետք է բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ հոդվածներով՝ դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» փակ բաժնետիրական ընկերության հայցն ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 27.03.2026թ. կայացրած թիվ 67-Ա, 02.04.2026թ. կայացրած թիվ 79-Ա հրամաններն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանի կողմից 27.03.2026 թվականին կայացված թիվ 67-Ա հրամանը՝ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

1.2. Անվավեր ճանաչել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանի կողմից 02.04.2026 թվականին կայացված թիվ 79-Ա հրամանը՝ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

2. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEDF-2EA9-438B-A95E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*